

XVII դԱՐԻ ԼԱՏԻՆԱՏԻՊ ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժ. Ժ. Ս. ՎԱՅՏԵՆԲԵՐԳ (Լեյպցե, Նիդերլանդիա)

Լատինատիպ է կոչվում գրաբարի XVII դարի քերականությունների մի որոշակի խումբ: Հայ բանասիրության մեջ այդ քերականությունները լավ համբավ չունեն: Խոսքը վերաբերում է հատկապես Կղեմես Գալանոսի, Օսկան Երևանցու և Հովհաննես Կոստանդնուպոլսեցի Հոլովի (Հովհաննես Ազոպ) քերականություններին¹: Այս հեղինակները մեղադրվել են այն բանի համար, որ ցանկացել են բռնի ձևով հայերենը նմանեցնել լատիներենի քերականական կառուցվածքին՝ բոլորովին անտեսելով հայերենին բնորոշ յուրահատկությունները: Նման դատողությունը ճիշտ է միայն որոշ վերապահովմաներով: Ստորև մենք կսփյառենք լատինատիպ քերականությանը մոտենալ այլ տեսանկյունից՝ որպես, չնայած իր ճախողմանը, մտածված փորձ՝ հայերենի դերի վերաբերյալ պատկերացումը հարմարեցնելու ժամանակի պահանջներին, որոնք ի հայտ եկան Արևմուտքի հետ շփումներից:

1. Նեղ առումով, այսինքն՝ վերևում նշված հեղինակների աշխատությունները² տեսքում, լատինատիպ քերականությունը նորմատիվ քերականություն է: Այս փաստով այն հայ քերականական գրականության մեջ նոր երևույթ էր: Նախորդ շրջանի հայերենի քերականությունները ավելի շուտ մեկնություններ էին, որոնք հենվում էին Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» վրա և դասվում են լեզվի փիլիսոփայության բնագավառին: Այդ բոլորովին նոր խնդրի լույսի ներքո էր, որ լատինատիպ քերականության հեղինակները հայերենի իոնեց նկարագրության համար ընտրեցին լատիներենի կաղապարը: Գալանոսը գալիս էր Արևմուտքից, Ոսկանը և Հովհաննես Հոլովը խորապես ազդվել էին արևմտյան մշակույթից: Այդ կաղապարին հայերենի հարմարեցումը ամբողջությամբ վերցրած անհաշո-

¹ Clemens Galanus. Grammaticae et logicae institutiones linguae litteralis Armenicae, Rome (Prop. Fide) 1645: Ոսկան Երևանցի. Քերականութեան գիրք. Ամստերդամ, 1666: Հովհաննես Կոստանդնուպոլսեցի (Հոլով). Զստութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական. Հոռոմ, 1674: Ռիվոլայի քերականությունը (Միլան, 1624) արժանի է առանձին ուսումնասիրության և այստեղ դրան չենք անդրադառնում: XVII դարի քերականական գրականության հիմնական վերլուծությունը տե՛ս Գ. Բ. Զահուկյան. Գրաբարի քերականության պատմություն. Սրևան, 1974: Հայոց լեզվի XVII դարի մի քանի քերականությունների բովանդակության նկարագրության համար տե՛ս նաեւ Ա. Գ. Առաքելյան. Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն. հ. 3, Երևան, 1975:

² Այն հարցը, թե պետք է ընդլայնել «լատինատիպ քերականություն» ըմբռնումը, ներառելով միաբանյալ եղբայրների (հատկապես Հովհաննես Քոնեցու) քերականական աշխատանքները, այստեղ չի քննվի: Գ. Զահուկյանը չի ընդունում միջնադարյան միաբանյալ եղբայրների ազդեցությունը լատինատիպ քերականության վրա (նշվ. աշխ., էջ 7): Ավելի դրա՞նստորեն է արտահայտվում Լ. Խաչիկյանը իր «Հովհաննես Քոնեցի, Ծաղազս քերականին», զերքում. Սրևան, 1977, էջ 50 և հատկապես էջ 144, նշում 48): Դավիթ Զեյթունցու (1530—1619) քերականության լատինատիպ բնույթի վերաբերյալ տե՛ս նաեւ Ն. Կ. Մելքոնյան. Դավիթ Զեյթունցի, Մեկնութիւն քերականի. Երևան, 1981, էջ 50:

դուքյան շմատնվեց: Ռայց լատինատիպ քերականության դեմ ուղղված քրննադատությունները վերաբերում են հատկապես լատինական կաղապարից ելնող մոտեցմանը: Այդ քննադատություններն իրենց արտահայտությունն են գտել Շահան-Ջրպետյանի մոտ, որը դրում է. «Այդ քերականների ամենացոյուն սխալները հիմնականում այն էին, որ նրանք միշտ համաձայնեցնում էին ածականները թվով և հոլովով իրենց գոյականների հետ, բայց խնդիրները ներկայացնում էին այս կամ այն հոլովածով՝ ըստ լատինական լեզվի գործառնության, բառերը խմբավորում էին համաձայն հոռմական լեզվի դարձվածաբանության կանոնների և հատկության, բոլոր անունները, անդամ չթեքվող, պարտադիր թեքում էին այս կամ այն ձևով... Նրանց քերականությունները, մեծ մասամբ լատինական կանոնների և ձևերի հիման վրա կազմված, տալիս էին միայն սովորական մանրամասներ և բավական հաճախ առաջարկում էին կանոններ՝ հակառակելով երկրի լեզվական սովորույթին և գրողների հեղինակությանը»³:

Հիշյալ քերականությունների վրա նետած առաջին խսկ հայացքը բավական է հաստատելու Շահան-Ջրպետյանի կարծիքը: Անհրաժեշտություն է առաջանում, սակայն, անելու մի քանի հարցադրումներ: Ո՞րն էր այն նրպատակը, որ հեղինակներն իրենց առջև դնում էին՝ գրելով իրենց աշխատությունները և ի՞նչ ձևով էին մտադիր հասնել այդ նպատակին: Ո՞րն էր հայոց լեզվի վերաբերյալ նրանց տեսակետը: Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է որոշ պատմական ակնարկ կատարել:

2. Կլովում XVII դարի առաջին տասնամյակները նշանավոր են այն բուռն վեճերով, որ տեղի էին ունենում հայ արքեպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչի, որը հոռմական եկեղեցու հետ միավորման կողմնակից էր, և հայ համայնքի միջև, որը ցանկանում էր պահպանել հայ առաքելական եկեղեցու հետ միասնությունը: Այդ պայքարից մի հետաքրքիր դրվագ է պահպանել Առաքել Դավրիժեցու պատմությունը, որից մեջբերում ենք հետևյալ հատվածը. 1629 թ. «Մովսէս կաթողիկոսն զմեծ աշակերտն իւր զԿեսարացի Խաչատուր վարդապետն՝ եղբարք ոմանք առաքեաց ի Լէհաց աշխարհն... և վասն զի ոչ ընդդիմակալ ախոյանի պատահալք էին եղբարքն... վասն որոյ ի միտս իւրեանց կարծէին զինքեանս գիտնականս և կարողս ոմանքս գոլ: Եւ այդ յիւով քաղաքի՝ յազգէն Ֆրանկաց պատրիք ոմանք եկին առ աշակերտն Մովսէսի վասն հակաճառութեան, և հարցին նոքա ցմերսն նախ ի քերական արհեստէն, և ասացին՝ «վարէմ» բառս թւո՞ւն է թի բայ, և մերքն անհմուտ գոլով զայլ և այլ պատասխանիս ասէին. յայնժամ նոքա քամահելով և ծիծաղելով այսպն արարեալ են զմերովքն և ի բազում աւուրս վասն հակաճառութեան այսպէս են արարեալ: Յայնժամ մերքն ի սիրտ և յոգի խոցեալք են. և իմացեալ թէ զայն, զոր գիտեն, ոչ է գիտութիւն, այլ պարտ է նոցա զարտաքին գիրքն կարդալ՝ և անդէն ի մտի եղեալ են հաստատութեամբ,

³ Y. Chahan de Cirbled. Grammaire de la langue arménienne. Paris, 1823, p. XXX not 1. *Լատինատիպ քերականության րացասական կողմերի վերաբերյալ ան'ս նաև* H. Thorossian. Histoire de la littérature arménienne. Paris, 1951, p. 700. Կարելի է կարգադրել նաև Ակինյանի դատողությունը Հովհաննես Հոլովի աշխատությունների մասին. «Յայտնի է, որ Յովհ. վարդապետ լատինարան մ'է յոռի հայերէնով, հայերէն մը, որ ամեն ճաշակի տէր անձ կը զղուեցնէ, կան թէեւ տեղիս ընտիր բառեր եւ բարդութիւնք (կերտուած լատիններէնի համաձայն), որոնք Ռադգիրք կազմողի մը կրնան օգտակար լոյս տալ: (Ն. Ակինյան. Հովհաննէս վ. Հոլով և իւր Թարգմանութիւնք «Բնագննութեան» և «Ձեռնագննութեան».— «Հանդէս ամսօրեայ», 1910, 24, էջ 326):

⁴ Այդ պայքարի նկարագրության համար տես' G. Petrowicz. L'Unione degli Armeni di Polonia coi la Santa Sede (1626—1683) (Orientalia Christiana Analecta. 135). Roma, 1950.

թէ գնամք յէջմիածին առ Մելիքսէթ վարդապետն, զայլ ամենայն ինչ թողնալ արտաքին գիրքն կարգամք ի նմանէս⁵։

Լիովում այդքան ամոթալի վիճակում հայտնված հոգևորականներից մեկը Սիմեոն Զուղայեցին էր⁶։ Վերավորանքը խոր գիտելիքներով վերացնելու վճռականությամբ վերադառնալով Հայաստան՝ նա հանդիպեց երիտասարդ աշակերտ Ոսկան Երևանցուն։ Նրանք երկուսն էլ դարձան խոշոր գիտնականներ, գրարարի քերականության հեղինակներ։

Այս դեպքը հատկանշական է բազմաթիվ առումներով. այն բացահայտում է դարաշրջանի հայ հոգևորականության տգիտությունը, Արևմուտքի հետ շփումից ցնցված լինելը, արևմտյան հոգևորականության մեծամտությունն ու գերադասությունը և հայերի հետադիմությունն այդ մարտահրավերում։ Նրանք ձգտեցին իրենց բացթողածը լրացնել սեփական ավանդական գրականության վերաբերյալ գիտելիքների մեծացմամբ։ Այս կապակցությամբ կարևոր է իրենց իսկ նշած այն փաստը, որ չունեին բավարար գիտելիքներ «արտաքին գրքերի» վերաբերյալ։ Թե ինչ են այդ «արտաքին գրքերը», պարզվում է Ոսկան Երևանցու ինքնակենսագրության մի հատվածից, որում նա նշում է այն տեքստերը, որոնց քննությանը ձեռնամուխ եղան ինքն ու Սիմեոն Զուղայեցին իրենց ուսումնառության ժամանակ՝ Պոքիյուրիսոս, Արիստոտելի «Կատեգորիաները» և Περὶ «Ἐρμηνείας», քերականություն «ըստ հին հեղինակների»⁷։ Պարզ է, որ խոսքը վերաբերում է հունարան մատենագրության փիլիսոփայական գործերին։

Մեկ այլ հետևություն, որ բխում է այս պատմությունից, պակաս կարևոր չէ։ Այստեղ երևում է, թե ինչպես քերականությունը, որ մեկնաբանվում է որպես տրամաբանության և փիլիսոփայության ներածություն, ներգրավվում է հայ հոգևորականության պայքարի մեջ ընդդեմ հռոմեական եկեղեցու ամենակույ նկրտումների։ Այս առումով հետաքրքիր է Ոսկան Երևանցու և Սիմեոն Զուղայեցու կյանքի հետագա ընթացքը⁸։

Երևանում գտնվելու ժամանակ Ոսկանը ծանոթանում է Պողոս Փիրումալուն՝ Նախիջևանի ապագա կաթողիկ արքեպիսկոպոսի հետ, որի ղեկավարությամբ շարունակում է իր ուսումը և որը նրա վրա խոր ազդեցություն է թողնում։ Նրանց կապերը պահպանվում են նաև հետագա տարիներին։ Դրանից բխող հայ հոգևորականների հետ հարաբերությունների բարդացումը, սակայն, ստիպում է Ոսկանին մեկնել Արևմուտք⁹։ 1666 թ. Ոսկանը հրա-

⁵ Առաքել Դավրիժեցի. Գիրք պատմութեանց. Ամսաերդամ, 1669, էջ 390. Տե՛ս նաև M.-F. Brosset. Collection d'historiens arméniens, tome 1, Saint-Petersbourg, 1874 p. 462.

⁶ Սիմեոն վարդապետն Զուղայեցի մեռալ յայսմ ամի (1657 թվին— ժ. վ.). գուրդ ի Լեոպոլիս՝ ընդ նուփրակին, ետես զտգիտութիւն իւր, զի եւ ոչ զքերականութիւն գիտէր. իբրեւ դարձաւ յերկիր իւր՝ այնչափ աշխատեցաւ ինքնին եւ առ այլս, զի ուսնալ շարադրեաց Քերականութիւն, որ եթէ այն է՝ զոր ես տեսի՝ ոչ է այնքան քամահելի, թեպէտ ոչ է ըստ արհեստիս, (Ստեփանոս Ռոշքա. Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք. Վիեննա, 1964, էջ 179—180)։

⁷ Առաքել Դավրիժեցի, էջ 633. M.-F. Brosset. Op. cit., p. 598. Հայերի մոտ արտաքին գրքերի ուսումնասիրության վերաբերյալ տե՛ս նաև Ա. Դավրիժեցի, էջ 387. Brosset. Op. cit., p. 453.

⁸ Ոսկան Երևանցու կենսագրության համար տե՛ս Կ. Ամատունի. Ոսկան վրդ. Երեւանցի և իր ժամանակը. Վենետիկ, 1975 («Բազմավեպ», հ. 9), իսկ Սիմեոն Զուղայեցու՝ Լ. Միրզոյան. Սիմեոն Զուղայեցի. Երևան, 1971 (հմտ. նաև Առաքել Դավրիժեցի, էջ 393, Brosset. Op. cit., p. 464.

⁹ Հնարավոր է, որ Ոսկանը մեկնել է Լիով (Ամատունի. նշվ. աշխ., էջ 82)։ Հետաքրքիր է նշել, որ Լիով քաղաքը դեր է խաղացել այս հոգվածում նշված անձանց մեծ մասի կյանքում, Դավիթ Զեյթունցին (տե՛ս նշում 2-ը), Կղեմես Դալանոսը, Սիմեոն Զուղայեցին և հավանաբար Ոսկան Երևանցին եղել են Լիովում։

տարակում է իր քերականությունը, որը դասվում է զուտ լատինատիպների շարքին:

Եթե Ոսկանը ենթարկվեց արևմտյան գիտական ավանդույթի ազդեցությանը, ապա նույնը տեղի չունեցավ Սիմեոն Զուղայեցու հետ: Լվով այցելելուց հետո վերջինս բավական շտապ ճանապարհով է նոր Զուղա, որտեղ նա ղեկավարում էր տեղի հոգևոր դպրոցը, մի դպրոց, որն իր ղեկավարությամբ ձեռք բերեց մեծ հեղինակություն և ազդեցություն: Կարևոր է այն փաստը, որ Լվովում ձախողվելուց հետո նա այլևս անմիջական շփում չունեցավ արևմտյան գիտնականների հետ: Նա դրում է հայերենի քերականությունը, որն իր ավարտից ի վեր ունեցել է մեծ ազդեցություն, ինչը վկայում է այդ աշխատանքի մեղ հասած ձեռագրերի մեծ քանակը, չնայած այն տպագրվել է 1725 թ.¹⁰ Այս քերականությունը բոլորովին տարբեր էր Ոսկանի գրածից: Գ. Զահուկյանն այն դասում է հունա-լատինատիպ տեսակին, որը բնորոշվում է Դիոնիսիոս Թրակացու քերականության վրա հենվող տեղական ավանդույթի շարունակությամբ¹¹:

Այս երկու ճանաչված հայ քերականներին վերաբերող դեպքերը ցույց են տալիս, թե ինչպես հայերենի քերականության նկարագրության կադապարի ընտրությունը կարող էր զենք դառնալ Հռոմի և էջմիածնի հոգևոր պայքարում: Իզուր չէ, որ լատինատիպ քերականությունը կապել են բոլոր եկեղեցիները կաթոլիկության մեջ ձուլելու Հռոմի նկրտումների հետ¹²: Ահա մեկն այն պատճառներից, որոնց հետևանքով հազվագեղ է փորձ արվում հայտնաբերելու լատինատիպ քերականության դրական կողմերը: Կարդանք պատմաբան Լեոյի բացասական կարծիքը այդ քերականների մասին. «Ամեն ինչ չափազանցություն էր այդ նեղսիրտ ֆանատիկոսների մեջ: Նրանք տգետ էին թե՛ լատիներենի և թե՛ մանավանդ հայերենի մեջ, բայց կրոնական ջերմեռանդության պահանջ էին համարում անչափ լատինամոլությունը, ուստի աշխատում էին լատինացնել ոչ միայն հայերի հոգին, այլև լեզուն»¹³: Արդյո՞ք հիմնավորված է Լեոյի այս դատողությունը: Լուծվածք անցնենք հայերեն մտածողությունը լատինացնելու մեղադրանքի վրայով, բայց իրո՞ք հայոց լեզվի լատինացումն էր այդ քերականների նպատակը:

3. Նախ և առաջ անհրաժեշտ է որոշել հայոց լեզվի այն տարբերակը, որ նկարագրել են լատինատիպ քերականները: Գիտենք, որ XVII դարի հայերենում պետք է տարբերել երեք մակարդակ. դրական լեզու (lingua literalis), քաղաքակիրթ հաղորդակցության լեզու (lingua civilis կամ lingua communis) և ժողովրդական լեզու (lingua vulgaris)¹⁴: Ժողովրդական լեզուն տեղի բարբառն է, որը XVII դարի քերականների կողմից ուշադրության չի արժանացել: Lingua civilis-ի սահմանիլը դժվար է: Պոսքը վերաբերում է լեզվի այն տեսակին, որը պարունակում է ինչպես ժողովրդական, այնպես էլ գրական լեզվից վերցված տարրեր. դրա առաջին նկարագրությունը տալիս է Շրյոդերն իր Thesaurus-ի մեջ (Amsterdam, 1711): Գրական լեզուն գրավոր լեզուն է՝ գրաբարը, որն ըստ էության նույնն է հայերեն դասական լեզվի հետ:

¹⁰ Սիմեոն Զուղայեցի. Գիրք որ կուի քերականութիւն. Կոստանդնուպօլիս, 1725:

¹¹ Գ. Բ. Զահուկյան. նշվ. աշխ., էջ 120:

¹² Այդ կապը հստակ երևում է Կղեմես Գալանոսի քերականության նիկու Թորոսովիչի գրած առաջաբանում. «Եվ ահա ինչու հարցնում եմ՝ ինչպես է ձևը տրվում կաթոլիկ հավատի տարածմանը»:

¹³ Լեո. Երկերի ժողովածու. հ. 3, գր. 1, Երևան, 1969, էջ 436:

¹⁴ XVII դարի լեզվալիճակի մասին տե՛ս J. J. S. Weitenberg. Evliya Chelebi on the Armenian language of Sivas in 1650. Some remarks.—Annual of Armenian Linguistics 5, pp. 99—106; N. Parnassian. On the formation of Ashkharhabar.—Annual of Armenian Linguistics 6, 1965, pp. 67—73.

Գրական լեզուն է, որ նկարագրվում է «լատինատիպ» քերականների կողմից: Պետք է գիտակցել, որ այդ քերականները, առաջին անգամը լինելով, գտնվում էին մի հասարակության առջև, որը չգիտեր այդ լեզուն: Այն պետք էր ոչ-հայերին (հատկապես արևմտյան կաթոլիկ միսիոներներին), որոնք ցանկանում էին հայերենի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերել: Բայց դրա կարիքը հավասարապես ունեին նաև իրենք՝ հայերը: Լատինատիպ քերականների գործունեությանը նախորդող դարերում գրաբարի որպես գրական հայերենի գործառության մակարդակն իջել էր. այն դարձել էր մի լեզու, որ սովորել էր պետք: Իրականում լատինատիպ քերականները իրենց ջանքերը դիտում էին որպես գրավոր լեզվի վերադարձնելուն, վերածնունդին փորձ:

Այդ իմաստով Հովհաննես Հովովի աշխատության «Զտույթին հայկաբանության» վերնադիրը որպես ծրագիր պետք է ընկալել¹⁵. փխրսոփայության ուսումնասիրության հիմքն ու ժամանակի գիտություն մուտք գործելու միջոց հանգիստացող գրական լեզվի իմացությունը և նրա մաքրությունը նրա պատակ էին: Հենց այսպես պետք է ըմբռնել Գալանոսի վերը նշված աշխատության «Հայերեն գրական լեզվի քերականության և տրամաբանության կառուցվածքը» անվանումը:

Ո՞րն էր լատինատիպ քերականների համար գրական լեզվի որոշման ելման կետը: Վերն ասվածից արդեն պարզ է, որ նրանք հայ մատենագրության «արտաքին գրքերին» մեծ նշանակություն էին տալիս: Ոսկանի վկայությունը մեզ ցույց է տալիս, որ նրանք այդ անման տակ հասկանում էին հունարան մատենագրության գործերը: Այդ մատենագրությամբ է որոշվում «գրական լեզվի» նրանց ըմբռնումը¹⁶: Լատինատիպ քերականության ուղղված մեղադրանքները մեծ մասամբ բացատրվում են այդ փաստի անուսմամբ: Չենք կարող XVII դարի հեղինակներին հանդիմանել հայերեն գրական (կամ դասական) լեզուն ոչ մեր ըմբռնմամբ օգտագործելու համար: Բավական է հիշել, որ Նզնիկի անունը բոլորովին ծանոթ չէր, իսկ Աստվածաշունչը նոր էր հրատարակվել:

Հունարան մատենագրության վերաբերյալ ժամանակակից կարծիքը նույնքան բացասական է, որքան լատինատիպ դպրոցի և հենվում է նույն փաստարկների վրա: Հունարան դպրոցին (VI—VIII դարեր) մեղադրում են հունարենի շարահյուսական նորմերի այն աստիճան ստրկական նմանակման համար, որ հայերեն թարգմանությունը մեղ գրեթե անհասկանալի է լինում, եթե ձեռքի տակ չենք ունենում հունարեն բնօրինակը¹⁷: Հունարան մատենագրության տեքստը բնորոշվում է խոսակցականի հետ շփում չունեցող արհեստական լեզվով:

«Լատինատիպ» հեղինակները այդ մատենագրությունից էին օգտվում գրական լեզուն «կատարելագործելու» և այն որպես ժամանակի գիտության հաղորդիչ հարմարեցնելու իրենց փորձերում: Այդ գրական լեզուն ճշտորեն նկարագրելու համար նրանք օգտագործեցին լատինական՝ նորմատիվ քերականության միակ առկա կաղապարը: Նրանք, ինչպես հունարան դպրոցի ներկայացուցիչները, ստեղծում էին չափից ավելի շարահյուսական և բառակազմական պատճեններ՝ այս անգամ վերցված հեղինակավոր լատիններենից: Այն փաստը, որ արդյունքում ստացվեց շատ արհեստական և իրենց ժամանակակիցների համար անգամ անգործաբեղի մի լեզվաձև¹⁸, նույնքան

¹⁵ «Ավելի շուտ պետք է ասել հայոց լեզվի աշխատողներին», Տե՛ս G. Avedichian. *Sulle correzioni del libri ecclesiastici armeni*. Venise. 1884. p. 30.

¹⁶ Գ. Բ. Զահուկյան. *Նշվ. աշխ.*, էջ 64:

¹⁷ Հունարան դպրոցի բնույթի վերաբերյալ բանավեճի համար տե՛ս A. Terian. *Philonis Alexandrini de Animalibus, Chico Ca. (Scholars Press) (Studies in Hellenistic Judaism, № 1, 1931).*

¹⁸ Գալանով XVII դարում լեհաստանում տեղ գտած հայ հոգևոր գրքերը կաթոլիկ իմաս-

քիչ կարևոր էր այդ լեզվի ստեղծողների, որքան և պետք է լիներ մեղ համար, որովհետև հունարան դպրոցը, որ նրանք դիտում էին որպես հայ գիտական և դրական մատենագրության ստեղծման լիակատար մասնակիցը, ի հայտ էր բերում նույն հատկանիշները:

Ստորև հունարան ավանդության կախյալ լինելը և լատինատիպ կաղապարի հայերենին վերագրումը ցույց կտանք երկու օրինակով՝ ներգոյական հոլովի նկարագրությամբ և կրավորականի բացատրությամբ:

4. Առաջին անգամ Ս. Գալանոսն էր, որ հայերենի նկարագրության մեջ ներմուծեց ներգոյական՝ նրա կողմից commorativus կոչված հոլովը: Բենք նրա նշած ձևերից մի քանիսը.

յԱղամում և յԱղամ	«Աղամի մեջ»
յանման և յանումն	«անման մեջ»
ի բնութեան	«բնության մեջ»
ի բանի և ի բանու	«բանի մեջ»
ի մարմին և ի մարմնի	«մարմնի մեջ»
ի ժամու և ի ժամ	«ժամում» և այլն:

Եթե մի կողմ թողնենք հայցականի հետ ի նախդրի մի քանի ոչ ճիշտ գուգորդումները (յ-Աղամ, յ-անումն, ի-ժամ), աչք է զարնում -ում վերջավորության գործածությունը: Գալանոսը օգտագործում է նաև ն- «մեջ» նախդիրը: Ոսկանի և Հովհաննես Հոլովի հարացույցներում կանոնավորապես հանդես են գալիս -ում վերջավորությունը և ն- ու ներ նախդիրները: Այս քերականների մոտ տարբերությունները մանրամասների մեջ են, բայց նրանք հանձնարարելի են համարում այնպիսի ձևը, ինչպես՝

նևր Աղամում	«Աղամի մեջ»
ի բանի կամ բն բանում	«բանում»
ի մարի կամ բն մարում	«մարում»
յոսկաղ կամ նոսկում	«ոսկում»:

Ակնհայտ է, որ այս հեղինակները ետդասական -ում վերջավորությունը և հունարան դպրոցին բնորոշ ն-, ներ-, նախդիրները¹⁹ ներկայացնում են որպես նորմեր: Հայերեն գրական լեզուն վերածնելու փորձերում «լատինատիպ» քերականները հանվում են հունարան գրականության օրինակի վրա: Երբ նրանք հանձնարարում են ներ մեքում խոսում «մեր լեզվում» օտարաբանությունը, իրենց մոտեցումը արդարացված են համարում հունարան տեքստերի ներ ձայնոֆն «ձայների մեջ», նենթակայում «ենթակայի մեջ» տիպի կազմությունների գոյության փաստով:

Ընդ որում ոչ դասական ն- նախդիրը դժվար է դուրս մղել նաև հետագա ժամանակների քերականների աշխատանքներից: Շրյոդերը այն օգտագործում է իր Thesaurus-ում և նրանով կազմված ներգոյականը ներկայացնում է որպես ընդունված ձև՝ յական և նական «աչքում» և այլն: Մխիթար Սեբաստացին տակավին փորձում է տալ այդ ձևի գործածման կանոնները²⁰:

5. Դժվարություններից մեկը, որ հանդիպում է գրաբարի բայի կրավորական սեռի նկարագրության ժամանակ, ձևի և նշանակության ոչ հետևողականորեն տարբերակվելն է: Որոշ բայեր տարբերում են կրավորական և

տով «ուղղելու» վերաբերյալ հայր Լուիջի Պիդոուի հաղվեությունից՝ Գալանոսի քերականության օգտագործումը խիստ կասկածելի է: Տե՛ս Բոնի միություն Հայոց լեզաստանի և եկեղեցույն Հոլովայ. Սանկա-Պետերբուրգ, 1884, էջ 225. այս աշխատության վերաբերյալ տե՛ս Petrowicz. Op. cit., ix:

¹⁹ Հունարան դպրոցի Թարգմանություններում (ը)-ի գործածության մասին տե՛ս J. A. C. Greppin. Arm. n., թո- in. --Revue des études arméniennes. 1984, № 18, pp. 307-314.

²⁰ Գ. Բ. Ջա հոսկայան. նշվ. աշխ., էջ 220:

ներգործական սեռերը (սիրեմ «սիրում եմ», սիրիմ «սիրվում եմ»), այլ բայեր՝ ոչ (բանամ «բացում եմ» և «բացվում եմ», լնում «լցնում եմ» և «լցվում եմ»), իսկ մի խումբ կրավորաձև բայեր կարող են ունենալ ներգործականի իմաստ (խաւսիմ «խոսում եմ»)։ Ավելին, ներգործական և ետավորական սեռերի ձևային տարբերակվածությունը կախված է բայի ժամանակից. ներկա ներգործական սիրեմ բայը ունի նաև կրավորական սիրիմ ձև, բայց նրա անցյալ անկատարը (սիրէի) միաժամանակ նշանակում է ն՝ «սիրում էի» և՝ «սիրվում էի»։ Դերբայները բայի սեռի հարցում տարրորոշվածություն չեն հայտարարում՝ սիր(եց)եալ «սիրած» և «սիրված»։ Հետևաբար չպետք է զարմանալ, որ այս հարցում «լատինատիպ» քերականները գտնվեցին լուրջ պրոբլեմի առջև, առավել ևս, որ նրանց միջնադարյան նախորդները չէին կարողացել գլուխ հանել այդ վիճակից։

«Լատինատիպ» քերականները լատիներենի կաղապարը օգտագործում էին՝ ձգտելով առավելագույն տարբերակվածություն։ Նրանք ցանկանում էին ներկայացնել մի հարացույց, որում, ինչպես լատիներենում, բայի ներգործական և կրավորական իմաստները գտնեին արտահայտման հստակ ձև։ Հովհաննես Հովսեփի ավելի հեռուն գնաց։ Նրա մոտ հանդիպում ենք այնպիսի ձևեր, ինչպես.

ներկա. ներգ.	սիրեմ.	ներկա կրավ.	սիրիմ
անց. անկ. ներգ.	սիրէի.	անց. անկ. կրավ.	սիրեցի
գերբ. ներգ.	սիրեսալ.	գերբ. կրավ.	սիրեցեալ

Դերբայական ձևերի արհեստական տարբերակման հարցում կարելի է, իհարկե, որոշ ըմբռնում ցուցաբերել, քանի որ գործ ունենք ձևային այնպիսի զույգի հետ, որի մի անդամը բազմերանգ է։ Ընդ որում այդ քայլն աննախադեպ չէ, այն կարելի է գտնել տակավին Գրիգոր Նարեկացու մոտ։ Առնում բայի ներգ. առեալ-ի կողքին՝ կրավ. առեցեալ։ Բայց այնպիսի ձևի ներմուծելը, ինչպես սիրեցի, տարակուսանք է առաջացնում։ Նրանք չէին կարող այդ ձևի համար գրական աղբյուր գտնել։ Այստեղ հանդիպում ենք լատինատիպ քերականության ամենախոցելի կողմերից մեկին։

Ձևային առավելագույն տարբերակման իրենց ձգտման մեջ «լատինատիպ» քերականները բանամ և լնում տիպի բայերի համար որոնում էին ներգործականի և կրավորականի հիմքեր։ Այս դեպքերի համար նրանք մըտցրեցին հետևյալ տիպի տարահիմք համակարգը.

ներգ.	կրավ.	«բարձրացնել» (Ոսկան) «լվանալ» (Հովսեփ) «վերցնել» (Գալանոս, Ոսկան) «լցնել» (Հովսեփ) «թողնել» (Գալանոս)
բանամ	բանիմ	
լուանամ	լուանիմ	
առնում	առնանիմ	
լնում	լնանիմ	
թողում	թողոնիմ	

Ընդարձակ նկարագրությունը կարելի է գտնել Գ. Ջահուկյանի հիշյալ աշխատանքում։ Այստեղ կարևոր ենք համարում նշել միայն, որ տարահիմք համակարգի ներմուծումը թելադրված էր լատինական կաղապարի։ Հարմարվելու ցանկությամբ Այնուամենայնիվ, ընտրելով այս զույգերի կրավորական անդամը, հեղինակները հենվում էին իրականում գոյություն ունեցող, թեկուզ և անդասական, ձևերի վրա²¹։ Այսպիսով, հստակ երևում է «լա-

21 Լուանամ, լուանիմ ձևերը գտնվում են Գրիգոր Նարեկացու մոտ (և հմտ. հոմաբան հեղինակների իմանամ, իմանիմ տիպի կրավորականները), բանանիմ-ը վկայված է XIII դարում, առնանիմ-ի համար տե՛ս «Նոր Բաղդիթ» (առնում բառահոգվածը), թողոնիմ ձևը. թվում է, ընդորինակված է միջին հայերենի կրավորականներից։

տիկնատիպների» գործնականում Հայերեն գրական լեզվի վերաբերյալ նրանց պաակերացումն ավելի լայն էր, քան գրարարի մեր ըմբռնումն է:

6. Եթե «լատինատիպ» քերականների փորձերի արդյունքների մասին դատենք ըստ այդ ժամանակի խոսակցական հայերենի հետ համապատասխանության կամ գրարարի այժմյան ըմբռնման չափանիշներով, կհանգենք միայն ամբողջությամբ ժխտողական եղրահանգումների: Այդ դեպքում կանտեսվի այն փաստը, որ այդ հեղինակները նպատակ չունեին գրել խոսակցական հայերենի քերականություն, և որ գրական հայերենի նրանց ըմբռնումը ավելի լայն էր, քան V դարի լեզուն: Նրանք ցանկանում էին վերածնել գրական հայերեն լեզուն և այդ նպատակով օգտագործում էին այն գրվածքները, որոնք համարում էին ամենակարևորը հայ գրտական մատենագրության մեջ: Իրենց քերականությունների համար լատինական կաղապարի օգտագործումը հայերենը լատինացնելու փորձ չէր, այլ տվյալ իրավիճակներում հայագիտության համար նրկմուաքի հետ մրցակցությանը դիմանալու միակ միջոց: Այս իմաստով «լատինատիպ» հեղինակներին կարելի է համարել ժամանակի համար արդիական: Հախուռնությունը, որով դատապարտվեցին նրանց ջանքերը, չի արդարացվում:

Հրատեսելից լուսգմանց՝ Բ. Ա. ԱՂԱՐԵՆԻԱՆԻ

ЛАТИНОФИЛЬСКАЯ (ԱՏԻՆՖԻԼՍԻ) ГРАММАТИКА XVII ВЕКА

Ж. Ж. С. ВАЙТЕНБЕРГ (Лейден, Нидерланды)

Резюме

Это в основном нормативная грамматика, которая является первой попыткой описания армянского языка. Предыдущие грамматики больше всего относились к сфере философии языка. Авторы латинофильской грамматики ставили себе целью описать армянский литературный язык. По их пониманию это был язык перевода трудов греческих античных авторов, хотя при его описании проникли и некоторые элементы разговорной речи. Грамматики этого языка они представили по единственной описательной модели—модели престижного латинского языка. Однако это не означало латинизации армянского языка, как обычно представляют последующие арменисты. Грамматисты-латинофилы стремились строго нормировать грамматику мертвого грабара, максимально дифференцировать форму и содержание в грамматике, что часто, к сожалению, приводило к созданию искусственных, а порой и чуждых армянскому языку форм. Эта, так называемая, модернизация грабара была продиктована требованием времени. Они старались сделать отсталую арменистику более прогрессивной и конкурентоспособной при контактах с Западом. Следовательно при оценке попыток описания грабара грамматистами-латинофилами надо учесть вышеуказанные факторы. Односторонняя критика этих азтороз не оправдана.